ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA
DEPUTY MINISTER

№ 1110/32845-23
22.06.2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՀԱԳՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովակիմյան,

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ս.թ. հուլիսի 9-ին Ուզբեկստանի Հանրապետությունում կայանալիք արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կարճաժամկետ դիտորդական առաքելության կազմում ՀՀ վարչապետի, ԱԳՆ և ԿԸՀ աշխատակազմերից մեկական թեկնածու առաջադրելու ձևաչափի հաստատումը /կցվում է/, ինչպես նաև վերոնշյալ պատվիրակության անհատական կազմի և ֆինանսավորման վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան-հիմնավորումը /կցվում է/, տեղեկացնում ենք.

Համաձայն ՀՀ վարչապետի 2023թ. մարտի 23-ի N 326-Ն որոշմամբ օտարերկրյա պետություններ գործուղումների Կարգում կատարված փոփոխությունների, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցները ՀՀ կառավարության որոշմամբ վերաբաշխվել և հատկացվել են հանրային իշխանության մարմիններին: Այդ իսկ հիմքով պատվիրակության յուրաքանչյուր անդամի գործուղման հետ կապված ծախսերը անհրաժեշտ է կատարել համապատասխան մարմնի պահպանման ծախսերում արտասահմանյան գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն ՀՀ վարչապետի 19.09.2018թ. N 1230-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի:

Ելնելով վերոգրյալից, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կազմում ընդգրկված պատվիրակության անդամների՝ Ուզբեկստանի Հանրապետությունում դիտորդական առաքելություն իրականացնելու հետ կապված ծախսերը պետք է կատարել հիմք ընդունելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից յուրաքանչյուր դիտորդի համար հաշվարկված ծախսերը /կցվում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համապատասխան ֆինանսական հաշվարկը/: Պատվիրակության անդամների գործուղման հետ կապված ճանապարհածախսը և ապահովագրության ծախսերը պետք է փոխհատուցել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Առդիր՝ 16 էջ

Կառավարական տուն 2, Վազգեն Սարգսյան 3, Երևան 0010: Հեռ. +374 60 620000, Ֆաքս +374 60 620062
Government House 2, 3 Vazgen Sargsyan str., 0010 Yerevan, Tel: +374 60 620000, Fax: +374 60 620062, E-mail: info@mfa.am

Հարգանքով՝

22.06.2023

X

ՎԱՀԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN VAHE 4008720073

ՎԱՀԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Թամարա Հովնանյան
Մոնիտորինգային մարմինների հետ համագործակցության բաժնի երրորդ քարտուղար
Հեռ. 60620479
Էլ-փոստ՝ t.hovnanian@mfa.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/09.1/20882-2023**

**ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ի պատասխան 2023 թվականի հունիսի 19-ի Ձեր N 1110/31553-23 գրության՝ վարչապետի աշխատակազմը հայտնում է դրական դիրքորոշում առաջարկված ճնաչափի վերաբերյալ:

Հարգանքով՝

**/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Լուսինե Միքաելյան
Կադրերի և անձնակազմի կառավարման վարչության պետի տեղակալ
Հեռ. 515754
Էլ փոստ՝ lusine.miqaelyan@gov.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 01/8-3/12358-2023

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 002

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան

ՀՀ ֆինանսների նախարարությունը քննարկել է ՀՀ արտաքին գործերի նախարարության՝ 2023 թվականի հունիսի 19-ի N 1110/31958-23 գրությամբ ներկայացված «Դիտորդական առաքելությամբ պատվիրակություն Տաշքենդ գործուղելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը և, հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2023թ. մարտի 23-ի N 326-Ն որոշմամբ օտարերկրյա պետություններ գործուղումների Կարգում կատարված փոփոխությունները, հայտնում է, որ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցները ՀՀ կառավարության որոշմամբ վերաբաշխվել և հատկացվել են հանրային իշխանության մարմիններին: Այդ կապակցությամբ առաջարկում ենք պատվիրակության յուրաքանչյուր անդամի գործուղման հետ կապված ծախսերը կատարել համապատասխան մարմնի պահպանման ծախսերում արտասահմանյան գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն ՀՀ վարչապետի 19.09.2018թ. N 1230-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք նախագծի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կազմում ընդգրկված պատվիրակության անդամների՝ Ուզբեկստանի Հանրապետությունում դիտորդական առաքելություն իրականացնելու հետ կապված ծախսերը կատարել հիմք ընդունելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից յուրաքանչյուր դիտորդի համար հաշվարկված ծախսերը՝ համաձայն N 2 հավելվածի»:

Միաժամանակ հայտնում ենք, որ պատվիրակության անդամների գործուղման հետ կապված ճանապարհածախսը և ապահովագրության ծախսերը պետք է հատուցվեն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X ____________________

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Մ. Շիշյան
Հեռ. 011800241

*Նախագիծ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

**2023 թվականի...........թիվ................Ա**

**ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱՇՔԵՆԴ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Ուզբեկստանի Հանրապետությունում կայանալիք արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելությամբ պատվիրակություն գործուղել Ուզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ)՝

1. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կարճաժամկետ դիտորդական առաքելություն կազմում 2023 թվականի հուլիսի 5-12-ը պատվիրակության անդամների՝ համաձայն N1 հավելվածի:

2.ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կազմում ընդգրկված պատվիրակության անդամների՝ Ուզբեկստանի Հանրապետություն գործուղման ճանապարհածախսը և ապահովագրության ծախսերը, ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից յուրաքանչյուր դիտորդի համար հաշվարկված ծախսերը՝ համաձայն N2 հավելվածի, կատարել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. Փաշինյան

2023թ. հունիս

Երևան

Հավելված 1

ՀՀ վարչապետի 2023թ.
Հունիս որոշման

# Կ Ա Զ Մ

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՑ 12-Ը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԿԱԶՄՈՒՄ ՏԱՇՔԵՆՏ ՄԵԿՆՈՂ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ

| | |
|---|---|
| Ալիսա Հայրապետյան | ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության ավագ մասնագետ |
| Թամարա Հովնանյան | ԱԳՆ աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության մոնիտորինգային մարմինների հետ համագործակցության բաժնի երրորդ քարտուղար |
| Լուսինե Հովակիմյան | ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի օգնական |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. Հարությունյան

Հավելված 2
ՀՀ վարչապետի 2023թ.

Հունիս որոշման

**ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ներկայացրած փաստացի ծախսեր**

| **Ծախսային հաշիվներ, որոնք պետք է վճարվեն ԺՀՄԻԳ-ին յուրաքանչյուր կարճաժամկետ դիտորդի համար կառավարության կողմից՝ դիտորդների Տաշքենդ գործուղումից վերադառնալուց հետո համաձայն**<br>***<u>ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ներկայացրած փաստացի ծախսերը հիմնավորող փաստաթղթի /գումարը չի փոխանցվում դիտորդին/</u>*** | **Եվրո** |
|---|---|
| Օդանավակայան/տեղափոխում և հետադարձ | 80 |
| Ներքաղաքային տեղափոխում և տեղակայման վայր տեղափոխում | 150 |
| Հաղորդակցություն (SIM քարտի և բջջային հեռախոսի օգտագործում) | 80 |
| Խորհրդակցության ծախսեր (խորհրդակցություն, խորհրդակցության փաթեթ) | 350 |
| | **660 եվրո** |
| **Յուրաքանչյուր դիտորդի փոխանցվող գումար**<br>**Առաքելության ընթացքում յուրաքանչյուր դիտորդի կողմից կատարվող *<u>պարտադիր</u>* ծախսեր**<br>***<u>/Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կանոնակարգի ծախսերը հավաստող փաստաթղթեր չեն պահանջվում/</u>*** | |
| Վարորդ/ավտոմեքենա (35 Եվրո յուրաքանչյուր օր * 4 օր) | 140 |
| Վառելիք (10 Եվրո յուրաքանչյուր օր * 4 օր) | 40 |
| Թարգմանիչ (35 Եվրո յուրաքանչյուր օր * 4 օր) | 140 |
| Բնակություն (180 Եվրո/յուրաքանչյուր գիշեր * 7 գիշեր) | 1260 |
| Սնունդ (50 Եվրո յուրաքանչյուր օր * 7օր) | 350 |
| Բնակություն և սնունդ թարգմանիչի համար՝ (50 Եվրո/ յուրաքանչյուր գիշեր * 4 գիշեր) | 200 |
| Բնակություն և սնունդ վարորդի համար՝ (50 Եվրո/ յուրաքանչյուր գիշեր * 4 գիշեր) | 200 |
| **Յուրաքանչյուր դիտորդի առձեռն վճարվող ընդհանուր գումար** | **2,330 եվրո** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. Հարությունյան